

1734 մարտ ամսոյն՝ կրկին աչքէ անցուցի Շնորհալւոյ թղթոյն թարգմանութիւնը. և սկզբնագրին հետ բաղդատելով՝ շատ ճշգութեամբ եղած կը գտնէի, ու քանի մի սրբագրութիւններ ընելով՝ կը համարէի թէ տպագրութեամբ հրատարակուելու անարժան երկ մը չէր, և հաճոյական լնդուննելութեան կրնար հանդիպիլ, իբրու նըմոյշ մը այն զրչագրաց՝ որոց յարենից ժամանումը արդէն հռչակուած էր ի գաղղիա:

Շարունակելի

## ՌԱՓԱՅԷԼ ԵԴՈՒԱՐԴ ՂԱՐԱՄԵԱՆ

(Տես յ'Էջ 88)

Խօսքերնուս կարգը կը բանադատէ զմեզ՝ եղուարդայ Ռափայելի մահուան ցաւալից արկածէն քիչ մը առաջ անցնիլ:

Բուզայեան վարդապետ Եղուարդայ որդուցը հետ Լոնտոն երթալէն ի վեր՝ ոչ միայն իրենց ազնուախոհ հօրը նպատակին հետեւելով անոնց դաստիարակութեանն ամէն հնարաւոր փոյթ և խնամք կը ցուցընէր, այլ ուրիշ ոչինչ նուազ կարեոր փափաք մալ կը սընուցանէր ի սրտին. և էր՝ ազգին աղքատ և անտէրունչ մանկութեան դաստիարակութեան գործը, օգտուելով Ղարամեանին առատամիտ ազգասիրութենէն և առ ինքն ցուցած բարեկամութենէն. Այս վախճանաւ այլեւայլ նամակներ ուղղած է առ նա. և առանձինն ընդարձակ գրութիւն մը, բացատրելով այսպիսի բարերարութենէ մը յառաջ գալիք օգուտը ազգին ընդհանրութեան. Բուզայենի այս գրութեան պատասխանն կու տայ Եղուարդ՝ 1729 փետրուարի 4 հետևեալ նամակաւ:

«Ի Լոնտոնու (ուղղեալ վեց նամակը) և յատկապէս տետրակդ՝ զրեալն ի 26 հոկտեմբերի որդ հասին ինձ. նախ ի վերայ առողջութեանդ քան զամենայն ուրախ եմ, և միտիթար լինելով, լիագոյն լըրոյ զաւակացս՝ զորոց զլուր տուեալ էիր ինձ. Նախ պատասխանեմ փոքր թղթոցդ, և ապա տետրակիդ՝ հատոր առ հատոր. զտետրակս գրոյդ՝ որում արժանապէս պատկանի պատասխանել. . . .»

«Ի տետրակին զրեալ էիր վասն որդուցս, զի թէ ոչ էիր ընդ նոսա՝ մոռացեալ լինէին զլեզրուն սեպհական. աներկրայ զիտեմ՝ զի թէ չէիր ընդ նոսա՝ մոռացեալ էին. յայսմ մասին բարեպէս ճանաչեմ զերախտիս քոյ, և շնորհակալ եմ զքէն, զօր հանապազ յիշեմ և ոչ մոռանամ երբէք. Դարձեալ խնդրեմ ի հայրութենէդ և ծառնուցանեմ վերապատութեանդ զռամկական առակս թէ ի կիսկա-

տար տան ոչ բնակեն շինողքն , այլ հողմն և անձրեւ տապալեն զայն , և ընդունայն լինին վաստակք շինողացն և ծախեալ գրամմ . վասն ուրոյ աղաշեմ վհայրութիւնդ՝ զի կատարելագործեսցես զլիակատար տունն , և ապա զորդիս իմ ի ձեռու իմ յանձնեսցես կրթեալ հայկական բառիւք և բարի վարուք : Յայնժամ յուսամ ի Ցէր զի գտցես զիս երախտագէտ ըստ ցանկութեանն քոյ , և մեծապէս շնորհակալ լինելով զքէն . և ակն ունիմ՝ ի վախջան բանիս , յետ փոքր ինչ ժամանակի տեսցես զերախտագիտութիւնն իմ : Այժմ կախեալ կայ ըզքէն՝ զի յանձնեսցես ինձ զորդիս իմ , որպէս ցանկամ ես :

« Պարոն Ուիլէմ Ռասն զրեալ էր ինձ թէ փոխարկէ զորդիս իմ ի դպրատուն մեծ՝ զի ուսցին ազատական իմաստութիւնն . քանզի կաւք իմ այս է , զի որչափ զանազան գիտութիւնս բաղձան մանկունքս ըստ կարողութեան մտաց իւրեանց և ցանկութեանն իւրաբանչիւրոց , և յոր գիտութիւնն բաղձան և ձգախն միտք նոցա՝ պարտիք թողունոցա հետեւել այնց գիտութեանց . վասն զի ոչ կամիմ խնայել յինչըս իմ վասն ուսման և իմաստութեան նոցա , յատկապէս սիրելի որդին իմ Աղեքսանդր , զորմէ ամենեքեանդ վկայէք թէ ունի կարողութիւն ուսանել զամենայն ինչ զոր ինչ յառաջ դրիցի նմա առ ի ուսանիլ . տիրութիւն և ամօթ համարի ինձ եթէ խնայեմ յինչս վասն յառաջանալոյ նորա . և մանաւանդ ի զրեալ տետրակիդ քում ճանաչեմ զի որդիք իմ հնազանդ են և սիրեն զքեզ . զիարդ կարես թողունոցա զսոսա . զի ի թղթի քում ընթերցեալ եմ զոր զրես թէ պարոն Ուիլէմ Ռասն ցանկայ տանել զորդիս իմ յօտար աշխարհ , յետ ելանելոյ նոցա ի դպրատանէն : Թէպէտ նա ինքն չէր ինձ գրեալ , այլ եթէ պատահիցի՝ որպէս և զրեալ էիր . խնդրեմ զի մի բաժանեսցիս ի նոցանէ յամենայն տեղիս և ի ճանտպարհս . այլ ընդ նոսա լիցիս մինչեւ ի վախջան յորում յանձնեսցես ինձ զորդիս իմ : Ես ճանաչեմ պարոն Ուիլէմ Ռասին որպէս ազնիւ և կատարեալ ուշիմ և խորագէտ . վասն որոյ խորհիմ թէ զամենայն զոր ինչ խորհի առնել վասն որդւոց՝ է բարութիւնն և հաւատարիմ բարեկամութիւնն ընդ իս՝ առանց ունելոյ ակնկալութիւն ինչ յինէն , որպէս և բարւոք գիտես , զի այրն այն չունի կարօտութիւն յինէն : Որովհետեւ սա օտարական գոլով ջանայ և վաստակի վասն որդոց իմոց , որչափ եւս առաւել հայրութիւնդ պարտիս ջանալ լինելով ի մերազնեաց , և ուխտել լինել հայր մանկանց . եւս առաւել զի մանկունքն սիրելի են քեզ . կամիմ ասել՝ թէ են իրրե զսեպհական որդիս , զիարդ թողունոց կամիս զսոսա , և մանաւանդ ի հասակի ալեկոծութեան՝ ի բաց թողունոց զզեկ նաւին . այն ինչ գիտեմ՝ զի եթէ ես ապերախտ գոլով զրեալ լինէի քեզ թէ թողցես և ելցես անտի , կարծեմ թէ ոչ հաւանէիր զրածիս , և ոչ թողունու զմանկունըն . բայց եթէ թողունու զնոսա , պարտաւոր լինէիր առաջի Աստուծոյ և ուխտի քոյ . որպէս և զրեալ է թէ եթող զիննսուն և ինն յա-

նապատի, և գնաց զհետ կորուսելոյն։ վասն որոյ աղաչեմ զվերապատուելիդ, որպէս և հաւատացեալ եմ քեզ, զի կացցես մնացես ընդ նոսա, և խնամեսցես զնոսա իբրև զրիբ ական, մինչև տացես ի ձեռս իմ. քանզի շատն գնաց և քիչն մնաց։ Ես յուսայի թէ յայսմ ամի գալոց էի ի Լոնտրա. բայց անյաջողութիւնն արգելեց ինձ, վասըն զի մինչև ցայսօր ի ընչից Մանիլու չէ իմ գտեալ զգանկ մի, փոխանակ բազում զրամոց զորս առաքեալ եմ անդ. եղիցին կամք ցեառն օրհնեալ, բայց յուսամ ամենաբարին Աստուած զի առաջնորդեսցէ զգալն իմ անզը ի գալ տարւոջ, կամ թէ յայսմ ամի. վասն զի տաղտ կացեալ եմ ի յաշխարհէն Հնդկաց. զի ոչ հաւատ, ոչ սէր գտանի, և մանաւանդ յազգի մերում...

Կիմացընէ դարձեալ Բուզայեան վարդապետի թէ իւր միակ դուստրըն ալ կը զրկէ ի Լոնտրա, և անոր ալ խնամքն ու դաստիաբակութիւնն յանձնելով իրեն, կ'աւելցընէ. «Գիտեմ զի ասես, ոչ էր բաւական զերկուսն, յաւել ի վերայ մի եւս. և ձանձրանաս յինէն։ Այո, վերապատուեալ, եթէ լինէիր ի տեղի իմում՝ և գու եւս, ոչ ամբաստանէիր զիս, և հակադարձն գովէիր։ Վերջապէս՝ ոչ կարես զերծուցանել անձն քոյ յինէն. զի գիտեմ ի սկզբանէ թէ հոզի Բուզայեան և Ղարամեան շաղկապեալ են, և ոչ բաժանին մինչև ի մահ։ բաւէ զիտութեանդ։ Բարւոք գիտեմ զի ասես ինձ թէ, Հետվարդ, որովհետև անբաժանք եմք Ղարամեանք և Բուզայեանքս, վասն էր ոչ բազրացուցանես և միսիթարես զիս ըստ ցանկութեանն սրտի իմոյ, որ այս էր երկրորդ բնաբան զրեցելոցդ ի տետրակիդ՝ թէ տայցեմ դրամս վասն հաստատելոյ գպրատան մանկանց. վասն շինութեան գպրատանն, հաւաստեաւ ճանաչեմ որ գրեալդ արդար է, և գործ մեծ ունել գպրատուն մանկանց ազգին մերոյ։ Ես ի վազուց հետէ ունելով զիտաւորութիւնն առնելոյ բարիս ազգի իմոյ ըստ կարեաց իմոց, և այժմ յորդորեցեալ գոլով ի քէն, լինելով դաստիարակ որդւոց իմոց, կամիմ զի միսիթարութիւնն մեզ երկոյունցս լինիցի՝ զի լիցիս պատճառ սկսմանն։ Ի որհուրդ իմ այս է. և ունիմ ի մտի առնել զայս ինչ. այս ինքն գնել 50,000 ռուբի ի պէնքի միում ինկլթէռոյ, Հուանտայ կամ ուր և իցէ, խորհրդովդ. և Տէր յաջողեսցէ. զի եկամուտ 50,000ից՝ որչափ և իցէ, որով կամիմ շինել փոքրիկ գպրատուն մի. և լիցիս գպրապետ կամ բէքթօր ի գպրատանն յայնմիկ. և ունիցիս զմի յեղբարց քոց ընդ քեզ, և որչափ բաւեսցէ այնու շահովմ տղայոց՝ զայնքան աշակերտս ունիցիս ազգէ Հայոց միշակօրէն կացութեամբ և ոչ որպէս զաւակք ազնուականաց. զի ուսցին հայերէն, լատիներէն և զլեզու տեղւոյն յորում է գպրատունն Այժմ այս էր յառաջադրութիւնս իմ, և յուսամ զի կատարեսցի ի ժամանակի քոյ»։